ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

30.09.2018թ. ք.Երևան

ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ ՕՀ բաժնի պետ Արմեն Ալեքսանյանս, ուսումնասիրելով Գվատեմալայի Հանրապետության քաղաքացուհի Էրնանդես Ագիլար Օնդինա Լիսետի վերաբերյալ նախապատրաստվող նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018թ. սեպտեմբերի 30-ին՝ ժամը 13:05-ի սահմաններում, ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության աշխատակիցների կողմից Զվարթնոց օդանավակայանի մաքսային հսկողության գոտում մաքսային հսկողության իրականացման արդյունքում Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ժամանած Գվատեմալայի Հանրապետության քաղաքացուհի Էրնանդես Ագիլար Օնդինա Լիսետի ուղեկցող ուղեբեռի միջից հայտնաբերվել են 3,944 կիլոգրամ ընդհանուր քաշով 4 հատ մետաղական տարաներ՝ թմրանյութի նմանվող զանգվածների պարունակություններով:

Էրնանդես Ագիլար Օնդինա Լիսետի վերաբերյալ նախապատրաստվում են նյութեր՝ ՀՀ ՊԵԿ քննչական վարչություն փոխանցելու նպատակով:

Էրնանդես Ագիլար Օնդինա Լիսետի Գվատեմալայի Հանրապետության քաղաքացուհի է. չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ հայերենին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իրենց իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57 րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով:

ՈՐՈՇԵՑԻ

1. Էրնանդես Ագիլար Օնդինա Լիսետի դեպքի առնչությամբ գրավոր բացատրություններ ստանալու, համապատասխան արձանագրություններ կազմելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել թարգմանչական <<Ֆինլոու>> ՍՊ ընկերության իսպաներեն լեզվից հայերեն և հակառակը թարգմանություններ իրականացնող թարգմանիչ Այծեմնիկ Սամվելի Ավետիսյանին: (անձնագիր AN0629414, տրված 24.08.2013թ., 057-ի կողմից, հաշվառված ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Պտղունք, Երևան-Էջմիածին խճուղի 97 հասցեում, լիազորագիր թիվ 611 առ 30.09.2018թ.), որը գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Այծեմնիկ Սամվելի Ավետիսյանին պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՕՀ բաժնի պետ՝ **Ա.Ալեքսանյան**

Սույն որոշումը ինձ հայտնվել է 30.09.2018թ.: Ես նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքները և պարտականությունները և նախազգուշացվել եմ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ <<ՖԻՆԼՈՈՒ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00124105) կողմից մատուցվել են ներքոհիշյալ
/ծառայությունը մատուցողի անվանումը/

աղյուսակով ներկայացված թարգմանչական ծառայությունները.

Թարգմանչական ծառայություններ						
Հ/հ	Գրավոր	Միջին բարդության տեխնիկական տերմինաբանական	Մայրենիից---լեզվով, /----- լեզվից մայրենի	Գրավոր /թերթերի քանակ/	Կայացրած որոշման օր, ամիս, տարեթիվ և հերթական համար	Վճարման ենթակա գումար /ՀՀ հազ. դրամ/
1.	Էրնանդես Ագիլար Օնդինա Լիսետի վերաբերյալ նախապատրաստվող նյութերի շրջանակներում բանավոր թարգմանություն	միջին բարդության տեխնիկական տերմինաբանական	/իսպաներեն-հայերեն - իսպաներեն /	990 բոպե	Թարգմանիչ հրավիրելու մասին որոշում	165,0

Ա. Ալեքսանյան

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՄԴՊՎ ՕՀ բաժնի պետ անուն, ազգանուն ստորագրություն ամիս, ամսաթիվ